ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«23» մարտի 2022թ. No 1220-Ա

# ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՖԱՐՄԱԹԵՆ Ս.Ա., ԴԵՐՎԵՆԱԿԻՈՆ 6, 15351 ՊԱԼԻՆԻ, ԱՏԻԿԻ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ( ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ԲԵԼԻՆԴԱ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ՍՊԸ, 18, ՆՈՐՄԱՆ ՌՈՈՒԴ 53, ԼՈՆԴՈՆ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ «ԼԵՎՈՅԱՊՍ ԼԵՎՈՖԼՕՔՍԱՑԻՆ (ԼԵՎՈՖԼՕՔՍԱՑԻՆԻ ՀԵՄԻՀԻԴՐԱՏ) ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ 500ՄԳ; (10/1X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 11.03.2022 թվականի N 0103029322 բացասական եզրակացությունը՝ Հունաստանի Ֆարմաթեն Ս.Ա., Դերվենակիոն 6, 15351 Պալինի, Ատիկի դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Բելինդա Լաբորատորիա ՍՊԸ, 18, Նորման Ռոուդ 53, Լոնդոն Միացյալ Թագավորություն «Լևոյապս լևոֆլօքսացին (լևոֆլօքսացինի հեմիհիդրատ) դեղահատեր թաղանթապատ 500մգ; (10/1x10/) բլիստերում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 20519 առ 11.03.2022թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ որակը չի համապատասխանում օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին, կամ փաստացի որակական և քանակական բաղադրությունը այնպիսին չէ, ինչպիսին ներկայացված է գրանցման փաստաթղթերում.

Ընդհանուր բաժին
№ 0980
25 MAR 2022
Կից Նշում

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Հունաստանի Ֆարմաթեն Ս.Ա., Դերվենակիոն 6, 15351 Պալինի Ատիկի դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի

25.03.2022 ժ. 12:20

իրավատեր՝ Բելինդա Լաբորատորիա ՍՊԸ, 18, Նորման Ռոուդ 53, Լոնդոն Միացյալ Թագավորություն «Լևոյապս լևոֆլօքսացին (լևոֆլօքսացինի հեմիհիդրատ) դեղահատեր թաղանթապատ 500մգ; (10/1x10/) բլիստերում» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետի պարտականությունները կատարող Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

23.03.2022

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157